

ՄԱՂԱՔԻ ԱՐՔ. ՈՐՄԱՆԵԱՆ ԵՒ ԿԱԽՈՎԻ, ԿՈՍՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ: Արարատ ամսագրի նախորդ խմբագրի Գարաբեն Վ.՝ Առաջինինի գրութիւնը Թիֆլիզի ՀԱՅԹԻՆԻՑ Թերթիւն արտասուած, 80 էջերէ ձևացած գրքոյկը հետաքրքրական տեղեկութիւններ կը բովանդակէ: Ունենալ փափառողները պէտք են դիմել Թիֆլիզ, Ելեփորաշարժ Տպ. Օր. Ն. Աղանեանցի:

ՆՈՐՈՂԱՎԱԿՆԻԲ: — Ցուշարար՝ Թատերական՝ Գրական՝ Գեղարվուեստական Պատկերազարդ երկարաթամբերթին VII յաւելուածն է, նորապակներ կատակերգութիւնը՝ երկու գործուութիւնը: Թիֆլիս յաւելուած սոյն 26 էջերէ բաղկացած մեծադիր տետրը 60 կոպէկ կ'արժէ:

Ի ՅԱՇԱՏԱԿ ՀԱՅ ԲԵՄԻ ՅԻՄԱԱՄԵԿԻ Տօնախմբութեան ի Բագրէ: — Այս ալ Ցուշարարի արտակարգ յաւելուածն է: Ապրող և վախճանած հայ Թատերախարագութիւնը և Թատերերութիւն գրողներու կենսանագիրներով գարգարուած և օգսակար գրութիւններով բովանդակութեամբ՝ շահնեան հրատարակութիւն մ'է:

ՀՅԱԼԻՆԵԱԿԻ, ԹԱԼՏՐՈՒՆ. — Հասկէր ամսաթերթի մանկավարժական գրադարանի XVIII գրքոյն է 60 էջով, թարգմ. Մ. Ասիկանէ: Կը որդիկն թէ ինչպէս պէտք է պատրաստել ընտանեկան Թատուրութիւնը. ինչպէս պէտք է սովորի գերերը, բեմի կահաւորութիւնը և այլն: Գինն է 20 կոպէկ, լոյս տեսած է 1908ին Թիֆլիզու Օր. Ն. Աղանեանի Ելեփորաշարժ Տպարանէն:



ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՒՐ

ՄՈՒՐԱՏ Ռ. Ա. Փ. Ա. Յ. Է. Լ. Ե. Ա. Ն

ՀԱԿԻՒ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԵԱ



Յօդ. 1. Վենեսուկոյ Միսիթարեան Վերապատուեալ Հարց անօրինութեան ներքե գտնուող Բարիզու, Վենեսուկոյ, Բատուայի և Գատը-Գիւղի Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու Աշակերտուներն եղայրակցութիւն մը կազմեցին ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅ-ԵԼԵԿԻՆՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ անուան ներքեւ:

Յօդ. 2. Ա. — Միութեան նպատակն է եղայրակցական յարաբերութիւն մը գոյացնել Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտաց մէջ, աշակեցնով իրարու նիւթապէս և բարյապէս. և այս նպատակաւ հաստատել Ըներեցարան-Լարան մը Միութեան անդամներուն յատուկ:

Digitised by

Բ. — Միութեան նպատակն է նաև, յառաջիկային երբ իր միջոցները ներեն,

1°. Սատարել կամ ձեռնարկել կրթական ազգօգուած գործերու, որոնք պիտի առաջարկուին Ձնօրէն Ժողովին կողմանէ և հաստատուին Ընդհանուր Ժողովէն:

2°. Ունենալ իրեն յատուկ թերթ մը՝ որ պիտի ըլլայ Միութեան ինքնուրոյն օվկանը և պիտի ծառայէ անոր գաղափարն ելերուն տարածման:

Յօդ. 3. Միութեան կրնան անդամակցիւ միայն Բարիզու, վենեսուկոյ, Բատուայի և Գատը-Գիւղի Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու նախկին աշակերտուները:

Միութիւնը կ'ընդունի նաև Մուրատ-Ռափայէլեան աշակերտուներէն զատ Պատուոյ անշամեներ:

Պատուոյ անդամներ կ'ըլլան այնպիսի անձեր՝ որոնք Միութեան իրենց ուղղակի աշակեցութեամբը կամ իրենց զիրցովը և կամ իրենց առանդովը պատի կը բերեն: Այսն անդամներուն ընդունելութիւնը կ'առաջարկուի Ձնօրէն Ժողովին կողմանէ և կը հաստատուի Ընդհանուր Ժողովէն:

Պատուոյ անդամները ժողովներու մէջ ձայն չընին և Ձնօրէն Ժողովին անդամ չեն կրնար ընտրուիլ:

Անդամ չեղող անձ մը կրնայ Միութեան ընտանեկան երեկոյթներուն մասնակցի պայմանաւ որ Միութեան անդամներէն մին զինքը ներկայացնէ և իրեն համար ստորագրէ մոււրքի Տոմարին մէջ:

Միութեան կեղրոնը Պոլիս է, սակայն գաւառները կամ արտասահման գտնուող աշակերտուներն ալ իրաւունց ունին անդամակցելու:

Յօդ. 4. Միութեան հասոյթի աղրիւները երկու տեսակ են, ուղղակի և անուղղակի:

Ուղղակի հասոյթներն են,

1°. Մտից առուց մը, մէկ անգամ վը-ճարելի, մէկ քառորդ ոսկի, կէս ոսկի և մէկ օսմ. ոսկի:

2°. Ամական բաժնեգին մը՝ 5 դահեկան, 10 դահեկան և 20 դահեկան:

A.R.A.R. @

Անդամները ազատ են ընտրել այս բաժ-
նեգիններէն որն որ ուզեն:

Անուղղակի հասոյթներն են,

1°. Զանազաններէ տրուելիք այլ և
այլ նույրատուութիւններ:

2°. Ի նպաստ Միութեան տրուելիք ը-
նուազահանդէսներէ, պարահանդէսներէ, և
ներկայացումներէ և բանախօսութիւններէ
գոյացած գումարներ:

3°. Միութեան ընտանեկան երեկոյթ-
ներուն մասնակցող այցելուներուն մուտքի
վճարներ:

Յօդ. 5. Ընդհանուր հասոյթներէն նախ
պիտի վճարուին Միութեան և Ծնբերցա-
րան-Լսարանին ընթացիկ ծախցերը, ո-
րոնք որոշուած պիտի ըլլան Տնօրէն ժո-
ղովին կողմանէ Ընդհանուր ժողովին ներ-
կայացուելիք նախատեսեալ հաշուեն (Յաձ-
գումար աւելնայ, այդ աւելցած գրա-
մին 50% պիտի մայ իրը պահեստի
գումար, իսկ մասցեալ 5% ալ պիտի
մայ Տնօրէն ժողովին տրամադրութեան
ներք, գործածելու համար Զորդ յօդուա-
ծին ա, պարբերութեան մէջ կանխատե-
սուած նիւթական աջակցութեանց:

Վերոյիշեալ պահեստի գումարը ամէն
անգամ որ 500 ոսկիի յանգի, Տնօրէն
ժողովը՝ տարւոյն շրջանին մէջ Ընդհա-
նուր ժողովին վաւերացման պիտի են-
թարկէ Զորդ յօդուածին թ. պարբերու-
թեան 1 և 2 թուահամարներուն մէջ նը-
շանակուած յարմարագոյն նպաստակները:

Յօդ. 6. Միութեան գործառնութիւննե-
րը կը կատարէ ինը անդամներէ բաղկա-
ցեալ Տնօրէն ժողովը, ընտրուած Ընդհա-
նուր ժողովին գաղտնի քուէարկութեամբ:

Սոյն Տնօրէն ժողովին քուէարկութեամբ
կ'որոշէ իր մէջէն Ատենապետը, Դիբ-Ա-
տենապետը, Ատենապահը, Գանձապե-
տը, Հաշուակալը և չորս խորհրդական-
ները:

Ընդհանուր ժողովին քուէարկութեամբ
ընտրուած վերոյիշեալ ինը անդամներէն
վերջը՝ յաջորդարար առաւելագոյն քուէ
ստացողներէն երեց կ'արձանագրուին՝

հրաժարող անգամներուն պակասը լըմ-
ցնելու համար:

Տնօրէն ժողովին նիստերը օրինաւոր
կերպով գումարուած ըլլալու համար,
պէտք է որ ներկայ անդամներուն թիւը
հինգէն նուազ չըլլայ: Որոշումները՝ ներ-
կաներուն քուէից բացարձակ առաւելու-
թեամբ կը տրուին, Ատենապետը մէկ ձայն
ունենալով:

Տնօրէն ժողովը արտօնութիւն ունի յա-
նուն Միութեան պէտք եղած ծափցերը
կատարել:

Տնօրէն ժողովին պաշտօնավարութեան
շրջանը մէկ տարի է, սակայն անդամները
կրնան վերընորուիլ:

Միութեան անդամները կրնան ներկայ
գունուիլ Տնօրէն ժողովին նիստերուն, ա-
ռանց սակայն ձայնի իրաւունց ունենալու:

Յօդ. 7. Ընդհանուր ժողովը տարին
մէկ անգամ, յունուար ամսոյն մէջ կը
գումարուի, Տնօրէն ժողովին կողմանէ
շարաթ մը առաջ եղած հրաւերով մը:

Ընդհանուր ժողովը վաւերական կեր-
պով գումարուած ըլլալու համար, պէտք
է որ Պոլսենակ անդամներուն կէսէն մէկ
աւելի ներկայ գունուի: Հակառակ պարա-
գային երկրորդ հրաւէր կ'ըլլայ, և այն
առեն ներկաներուն ո՛ւ և է թիւը բաւական
է ժողովը վաւերական համարելու:

Յօդ. 8. Եղբայրակցութեան ոգին Միու-
թեան առաջին և զիխաւոր սկզբունքն ըլ-
լալով, բոլոր անդամներն ալ միևնույն ի-
րաւունցները և միևնույն պարտականու-
թիւնները ունին, առանց խտրութեան տա-
րիքի և զիբքի:

Յօդ. 9. Այն անդամներն որոնք իրենց
ապօրինի արարցներով և կամ անպատ-
շան զնացքով կ'անպատուեն Միութիւնը,
յիտ քննութեան և հաստատման կը վր-
տարուին Ընդհանուր ժողովին որոշմամբ:

Յօդ. 10. Վտարեալ և կամ կամովին
հրաժարած անդամներն ինչ և է իրաւունք
մը չունին ես պահանջելու իրենց վճա-
րած գումարը:

Յօդ. 11. Այն անդամներն՝ որոնք ե-
րեք ամիս իրենց բաժնեգինը չեն վճա-

բած, Միութենէն հրաժարուած կը նկատուին ջնօրէն ժողովին որպշմամբ:

Հրաժարուած անդամներն եթէ ուզեն վերատին մասնակցիլ Միութեան, պէտք է զնարեն ամրողլութեամբ իրենց յետամաց պարտքերը:

Յօդ. 12. Գանձապետին տրամադրութեան ներգև 15 ոսկիչ աւելի զրամ չկըրնար պահուիլ. աւելին՝ որոշուած դրամատան մը մէջ պէտք է ի պահ դրուի Միութեան անուամբ:

Խսկ դրամատունէն առնուելիք ո՛ և է գումարի մը գործողութիւնը՝ Ատենապետին, Գանձապետին և Հաշուակալին երբեակ ստորագրութիւններով պէտք է կատարուի:

Յօդ. 13. Ջնօրէն ժողովը՝ տարեվերջին կը ներկայացնէ Ընդհանուր ժողովին իր գործառնութեանց հաշիները և յաջորդ տարուան պիտմէն, և եթէ յարմար զատուի կը հրատարակուին:

Յօդ. 14. Միութեան անդամները իրաւունք ունենալով Ջնօրէն ժողովին գործառնութեանց տեղեակ ըլլալ, նիստերուն ատենագրութիւնները օրը օրին պիտի արձանագրուին մասնաւոր ջումարի մը մէջ՝ և տրամադրելի պիտի ըլլան փափաքող անդամներուն:

Յօդ. 15. Եթէ Ջնօրէն ժողովին գործառնութեանց մէջ Միութեան կանոնագրութեանց հակառակ ընթացք մը հասատուի, Միութեան անդամներուն մէկ քառորդին պահանջման վրայ արտասառվոր Ընդհանուր ժողով կը գումարուի զարժանը տնօրինելու համար:

Յօդ. 16. Ո՛ և է պատճառաւ եթէ Միութիւնը լուծուի, և կամ եթէ անդամոց թիւը տասնէ պակաս ըլլան, դրամագլուխը և գոյցերը դրամի վերածուելով ի պահ պիտի զրուի առաջնակարգ դրամատան մը մէջ Միութեան անուամբ, ազգային կրթական նպատակի մը յատկացնելու համար. և նոյնին գործադրութիւնը պիտի ստանձնէ վենստկոյ Միութարեան Միաբանութիւնը:

Յօդ. 17. Տարին անգամ մը Միութեան անդամները հանդէս մը պիտի սարքեն ի յիշատակ մեծանուն բարերարաց Սամուէլ Մուրատի և Եղուարդ Խափայէլի, ինչպէս նաև Միութարեան Միաբանութեան անզուգական հիմնադիր՝ Մեծին Միութարայ:

Թեան անդամները հանդէս մը պիտի սարքեն ի յիշատակ մեծանուն բարերարաց Սամուէլ Մուրատի և Եղուարդ Խափայէլի, ինչպէս նաև Միութարեան Միաբանութեան անզուգական հիմնադիր՝ Մեծին Միութարայ:

Յօդ. 18. Ընդհանուր ժողովը միայն արտօնութիւն ունի ներկայ կանոնագրութեան յօդուածները աւելցնել, պակսեցնել և կամ անոր տրամադրութիւնները փոփոխել:

* * *

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԻՒԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

- | | |
|---|----|
| Հ. Ներսէս Տ. — Հայաստանի բուռագիրը և Հայկակն բուռարան | 49 |
| Հ. Յ. Աւելիք. — Լասեն լեզուն և զրականութիւններաց բով | 59 |
| Պրոֆ. Ղեմամ. — Նութեր Հայաստանի հնագույն պատմութեան, Թրգմ. Հ. Յ. Աստուրեան | 67 |
| Տաղաւարինամ Ն. — Ուրուածի պատմութեան Հայոցի սկզբանէ մինչ շԱրշակունի Հարսուսութիւնն. | 73 |

ԳՐԱԿԱՆՔ

- | | |
|---|-------|
| Վերգիլիոսի «Ծէկակաթ»ին. — Նաւամարտ Թագարմ. Հ. Ա. Ղազիկեան | 77 |
| Հիլլէր. — Բաղդա և իմաստութիւն. Թագարմ. Գր. Գ. Բ. Առունի | 79 |
| Անարութ. — Հեմած վահկեր. Աւելներ, Ցանցանց առնշանը | 79-80 |

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

- | | |
|---|----|
| Հ. Ներսէս Տ. — Թալնագործիներ. | 81 |
| Որիսմ. — Լուսնակարչութիւնը աստղաբաշխութիւնն մէջ | 87 |

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՔ

- | | |
|--|----|
| Հ. Ք. Զարքեան. — Նումառու Համբուցեալ 1908ը. Մուրացան | 89 |
|--|----|

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- | | |
|--|----|
| Հ. Յ. Աւելիք. — Միքայէլ Աշումեանի Թրթուռն յանդեր. Կայլն. | 92 |
| Հ. Ն. Տ. — Ամենուն տարեցոյթը. Ուսանց տարեցոյթը, Կայլն | 93 |

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԻՔ

- | | |
|--|--------|
| Խամսաներ | 76, 88 |
| *** — Կազմական կանոնագիր Մուրատ-Թագայէլեան նախկին աշակերտաց միութեան | 94 |